



զավթելով նաև Արևելյան Հայաստանի հողերի մի մասը, թուրքերը համակերպվում էին ՀՀ ինքնիշխանության հետ: Հոկտեմբերի 30-ին Մուղրոսի զինադադարի ստորագրմամբ Օսմանյան կայսրությունը ճանաչեց իր պարտությունն Առաջին աշխարհամարտում, չեղարկվեց Բաթումի պայմանագիրը, և աստիճանաբար վերականգնվեցին 1914 թ. սահմանները:

Մուղրոսի զինադադարը Հայաստանի ղեկավարության և արևմտահայ գործիչների շրջանում Միացյալ Հայաստանի գաղափարի կենսագործման նոր հույսեր արթնացրեց, և այդ ուղղությամբ սկսվեցին գործուն քայլեր ձեռնարկվել: Այդ ժամանակահատվածում հայ քաղաքական միտքը Միացյալ Հայաստանի գաղափարի կենսագործման հետ էր կապում սահմանափակ տարածք և դեպի ծով ելք չունեցող նորանկախ հայկական պետության ապագան:

Մուղրոսի զինադադարի ստորագրումից հետո Միացյալ Հայաստանի կերտման ուղղությամբ զուգահեռաբար քայլեր կատարվեցին ինչպես արտաքին, այնպես էլ ներքին ուղղություններով: Արտաքին ուղղությամբ ձեռնարկված քայլերը պայմանավորված էին Ավետիս Ահարոնյանի ու Պողոս Նուբարի գլխավորած ՀՀ և Ազգային պատվիրակությունների՝ Փարիզի Խաղաղության վեհաժողովում ծավալված գործունեությամբ, իսկ ներքինը՝ Երևանում Արևմտահայ Երկրորդ համագումարի և ՀՀ իշխանությունների փոխհարաբերություններով ու գործակցությամբ: Որոշակի փուլում այս երկու ուղղությունները մեկտեղվեցին և հանգեցրին Միացյալ Հայաստանի անկախության ակտի ընդունմանը, որի կենսագործման ուղղությամբ առաջին լուրջ քայլերը դարձան Սևրի պայմանագրի ստորագրումն ու ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի Իրավարար վճռի ընդունումը:

## 1. Միացյալ Հայաստանի կերտման ուղղությամբ կատարված արտաքին քաղաքական քայլերը

1919 թ. փետրվարի 3-ին Փարիզ ժամանած, Ա. Ահարոնյանի գլխավորած ՀՀ պատվիրակությանը ցուցում էր տրվել Փարիզի վեհաժողովից պահանջել Միացյալ Հայաստանի ստեղծումը՝ Անդրկովկասի հայկական տարածքներից, Արևմտյան Հայաստանի վեց նահանգներից՝ ելքով դեպի Սև ծով: Այս պահանջներին չհամաձայնելու դեպքում Միացյալ Հայաստանի նվազագույն սահմանների մեջ պետք է ընդգրկվեին Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգները, իսկ Անդրկովկասում կարող էին դուրս թողնվել միայն Գանձակը և Թիֆլիսի նահանգի որոշ շրջաններ<sup>1</sup>: Այսպիսով, ՀՀ պատվիրակության Միացյալ Հայաստանի նվազագույն տարածքային պահանջները մոտավորապես համընկնում էին հետագայում ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռով գծված Հայաստանի սահմաններին:

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, թ. 10-12:

Ի տարբերություն Միացյալ Հայաստանի տարածքների հարցում ՀՀ պատվիրակության դիրքորոշմանը՝ Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի նախաձեռնությամբ փետրվարի 18-ին Փարիզում հրավիրված Ազգային համագումարի որոշմամբ Միացյալ Հայաստանի կազմում ընդգրկվելու էին ոչ միայն Արևմտյան Հայաստանի վեց նահանգները և Հայաստանի Հանրապետության տարածքը, այլև Կիլիկիան: Ա. Ահարոնյանը և Հ. Օհանջանյանը հրաժարվեցին ձայնի իրավունքով մասնակցել այդ համագումարին՝ նշելով, որ իրենք լիազորված են միայն Փարիզի Խաղաղության վեհաժողովի համար: Դրանով համագումարը համազգային դարձնելու՝ Պ. Նուբարի ծրագիրը ձախողվեց, ուստի այն ուղղակի հռչակվեց Փարիզի Ազգային համագումար և պետք է ներկայացներ միայն արևմտահայությանը: Համագումարում որոշվեց, որ Հայկական հարցի վերաբերյալ հուշագրերը և դիմումները պետք է ստորագրվեն ինչպես Պ. Նուբարի, այնպես էլ Ա. Ահարոնյանի կողմից, և առանց երկկողմ համաձայնության որևէ քայլ չի կատարվելու<sup>2</sup>: Այս որոշումը, թերևս, պայմանավորված էր նրանով, որ մինչև Ա. Ահարոնյանի Փարիզ ժամանելը Պ. Նուբարին թույլ չէր տրվում մասնակցել վեհաժողովի աշխատանքներին այն հիմնավորմամբ, որ նա ինքնիշխան պետության կառավարություն չի ներկայացնում:

Փետրվարի 26-ին նախատեսված էր Փարիզի վեհաժողովի Տասի խորհրդում քննարկել հայկական պահանջները: Ֆրանսիան փորձում էր խոչընդոտել այդ քննարկումներին Պ. Նուբարի մասնակցությունը, քանզի վերջինս Միացյալ Հայաստանի կազմում Կիլիկիայի ներառման ամենատեսանելի ջատագովն էր: Միայն անգլիացիների միջամտությունից հետո Պ. Նուբարը վեհաժողովին մասնակցելու պաշտոնական հրավեր ստացավ<sup>3</sup>:

Չնայած կառավարության ցուցումներին՝ հայկական պատվիրակությունների պառակտումից խուսափելու նպատակով Ա. Ահարոնյանը համաձայնեց Պ. Նուբարի հետ միասին Փարիզի վեհաժողովի Տասի խորհրդին ներկայացնել Փարիզի Ազգային համագումարի կողմից հաստատված հայկական տարածքային պահանջների հուշագիրը, որով Միացյալ Հայաստանի կազմում Արևմտյան Հայաստանի վեց նահանգներից ու Հայաստանի Հանրապետության տարածքից բացի նախատեսվում էր ներառել նաև Կիլիկիան՝ առաջ քաշելով Միացյալ Հայաստանի մանդատը ԱՄՆ-ին փոխանցելու հարցը<sup>4</sup>: Ներկայացված փաստաթղթում ընդգծվում էր, որ Միացյալ Հայաստանի կազմում ընդգրկվող տարածքներում զանգվածային բնաջնջման հետևանքով հայերի թվաքանակի նվազումը չպետք է հաշվի առնվի, քանզի չի կարելի թույլ տալ, որ հայերի նկատմամբ ուժիղների կազմակերպիչները օգուտ քաղեն դրանից և հասնեն այդ տարածքներում մահմեդականների գերակայության իրենց ծրագրի իրագործմանը<sup>5</sup>: Հուշագրի ներկայացումից հետո Ահարոնյանը զեկուցագիր ուղարկեց ՀՀ ԱԳ նախա-

2 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 28, թ. 35:

3 Տե՛ս Պողոսեան Ա., Պողոս Նուբար փաշա. ազգային գործիչը, Եր., 2004, էջ 143:

4 Տե՛ս Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Եր., 2001, էջ 14-16:

5 Տե՛ս Հայկական հարցը հաշտութեան կոնֆերանսի առաջ, Թիֆլիս, 1919, էջ 7:

րարին, որում փորձում էր բացատրել կառավարության ցուցումներից շեղվելու պատճառներն ու շարժառիթները:

Ինչպես և սպասվում էր, փետրվարի 26-ի հայկական պատվիրակությունների համատեղ հուշագրում Միացյալ Հայաստանի կազմում Կիլիկիայի ընդգրկման և Հայաստանի մանդատը ԱՄՆ-ին հանձնելու դրույթները հանդիպեցին Ֆրանսիայի հակազդեցությանը, քանզի վերջինս հավակնություններ ուներ Կիլիկիայի նկատմամբ:

1919 թ. ապրիլին Ա. Ահարոնյանի և Պ. Նուբարի ստորագրությամբ Փարիզի վեհաժողովի Փոխհատուցումների հանձնաժողովի Հատուկ հանձնախմբին ներկայացվեց Արևմտյան Հայաստանի և Հայաստանի Հանրապետության տարածքներում հայ ժողովրդին հասցված նյութական վնասների հատուցման հուշագիրը: Ներկայացված փաստաթղթի համաձայն՝ 1915–1919 թթ. հայերի ունեցած նյութական կորուստները հաշվվում էին 19.130.982.000 ֆրանսիական ֆրանկ, որից 14.598.460.000-ը բաժին է ընկնում արևմտահայությանը, իսկ 4.532.472.000-ը՝ Հայաստանի Հանրապետությանը<sup>6</sup>: Բնական է, որ չափազանց սեղմ ժամկետներում և Հայոց ցեղասպանության շարունակման պայմաններում հնարավոր չէր հավաքել ու համակարգել հայ ժողովրդի կրած նյութական կորուստների վերաբերյալ ամբողջական և սպառիչ տեղեկություններ, սակայն կարևոր էր, որ հայկական պատվիրակությունները Խաղաղության վեհաժողովին տարածքային պահանջներից բացի ներկայացնում էին նաև հայ ժողովրդի կրած նյութական վնասների հատուցման պահանջը:

## 2. Միացյալ Հայաստանի կերտմանն ուղղված ներքաղաքական գործընթացները

Հայաստանի քաղաքական օրակարգում Միացյալ Հայաստանի հարցի պաշտոնական ներառման առումով վճռորոշ ազդեցություն ունեցավ Երևանում կայացած Արևմտահայերի երկրորդ համագումարի կողմից ընդունված 1919 թ. փետրվարի 12-ի «Քաղաքական բանաձևը»: Այդ փաստաթղթի 5-րդ կետով արևմտահայերի համագումարն իր Գործադիր մարմնին լիազորում էր Արարատյան Հանրապետության կառավարության և պառլամենտի հետ միասին իրական քայլեր ձեռնարկել Միացյալ և Ազատ Հայաստանի հռչակմանն ուղղությամբ<sup>7</sup>: Այս ձևակերպումով արևմտահայերի լեգիտիմ մարմինը Միացյալ Հայաստանի կերտման գործում Հայաստանի Հանրապետությանը լիազորում էր հանդես գալ նաև իր անունից:

Երկրորդ համագումարի ընդունած որոշումից ելնելով՝ արևմտահայերի Գործադիր մարմինը պաշտոնապես դիմեց ՀՀ կառավարությանը՝ Հայաստանի երկու հատվածների միացումը հայտարարելու խնդրանքով: Փետրվարի 25-ին ՀՀ կառավարությունը քննարկեց հարցը և արտագործնախարարությանը հանձնարարեց

6 Տե՛ս Ցեղապանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները (կազմող՝ **Լ. Բարսեղյան**), Եր., 1999, էջ 13:

7 Տե՛ս **Սեփեռան Վ.**, Արևմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., Եր., 2007, էջ 10:

այդ մասին զեկույց ներկայացնել օրենսդիր մարմնին՝ Հայաստանի խորհրդին: Քանի որ ապրիլի 27-ից գործունեությունը ժամանակավորապես կասեցրած օրենսդիր մարմնի՝ Հայաստանի խորհրդի լիազորությունները փոխանցվել էին կառավարությանը, ուստի վերջինս 1919 թ. մայիսի 26-ին ընդունեց Ա. Խատիսյանի կազմած «Միացյալ Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթը, որում վկայակոչելով Արևմտահայերի երկրորդ համագումարի կողմից Հայաստանը միացյալ և անկախ ճանաչելու հանգամանքը՝ սահմանվում էր, որ Հայաստանի խորհրդարանն ու կառավարությունն են հանդիսանում Միացյալ Հայաստանի բարձրագույն օրենսդիր և գործադիր իշխանությունները: Ակտի վերջում նշվում էր, որ կառավարությունը տվյալ փաստաթուղթը հրատարակում է 1919 թ. ապրիլի 27-ին պառլամենտի որոշմամբ իրեն տրված հատուկ լիազորությունների հիման վրա<sup>8</sup>: Այս քայլով Հայաստանի Հանրապետությունը իրավական առումով ստանձնում էր Միացյալ Հայաստանի կերտման ուղղությամբ քայլեր կատարելու հանձնառությունը, որը նրան էր վստահվել նաև Արևմտահայերի երկրորդ համագումարի որոշմամբ: «Միացյալ Հայաստանի անկախության մասին» փաստաթղթի տրամաբանական շարունակությունը եղավ մայիսի 27-ին «Հայաստանի խորհրդի համալրման մասին» կառավարության որոշման ընդունումը, որի համաձայն Հայաստանի խորհրդի կազմը համալրվում էր Արևմտահայերի երկրորդ համագումարի Գործադիր մարմնի 12 անդամներով<sup>9</sup>:

Հարկ է նշել, որ թեև կոալիցիոն կառավարության կազմում ընդգրկված Ժողովրդական կուսակցության նախարարները ստորագրեցին հաջորդ օրը՝ մայիսի 28-ին հրապարակված «Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման մասին» հռչակագրի տակ, սակայն շուտով պատճառաբանելով, թե այն չի համաձայնեցվել Ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուբարի հետ, ի նշան բողոքի դուրս եկան կառավարությունից<sup>10</sup>: Պ. Նուբարն իր հերթին ոչ թե դեմ էր Միացյալ Հայաստանի գաղափարին, այլ դժգոհ էր նրանից, որ ՀՀ կառավարությունն իրեն Միացյալ Հայաստանի բարձրագույն իշխանություն է հռչակել:

### 3. Միացյալ Հայաստանի կերտման ուղղությամբ արտաքին քաղաքական քայլերի և ներքաղաքական գործընթացների մեկտեղումը

Հակասությունները հարթելու նպատակով 1919 թ. հոկտեմբերին Վ. Թեքեյանի գլխավորությամբ Երևան ժամանեցին Պ. Նուբարի պատվիրակները, որոնք բանակցություններ սկսեցին ՀՀ կառավարության հետ: Վերջինս ներկայացնող Ա. Վրացյանը համաձայնեց, որ Պ. Նուբարը դառնա հայկական միացյալ պատվիրա-

8 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 84:

9 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 282, թ. 9:

10 Տե՛ս Հակոբյան Ա., Միացյալ Հայաստանի անկախության ակտը. ընդունման 90-ամյակի առիթով, «ՎԷՃ», Եր., 2009, N 1 (29), էջ 107:

կության ղեկավար և նշանակի պատվիրակության երկու անդամներին (մյուս երկու անդամներին նշանակելու էր ՀՀ կառավարությունը), սակայն մերժեց նրա վարչապետ դառնալու և խորհրդարանը լուծարելու պահանջները<sup>11</sup>: Իսկ Վ. Թեքեյանն իր հերթին մերժեց կառավարության փոխզիջումային առաջարկը, սակայն քիչ անց՝ 1920 թ. հունվարի 30-ին, Պ. Նուբարը հեռագրեց Խատիսյանին, որ համաձայն է նրա առաջարկած պայմաններին և խնդրում է Ա. Ահարոնյանին տեղեկացնել պատվիրակությունների միավորման մասին<sup>12</sup>: Պ. Նուբարի համաձայնությունը, սակայն, ուշացած էր, քանզի 1920 թ. հունվարի 19-ին Դաշնակից երկրների խորհուրդը փաստացի կերպով ճանաչել էր Հայաստանի Հանրապետությունը, և բանակցություններն արդեն հիմնականում վարվում էին ՀՀ պատվիրակության հետ:

Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից ընդունված ներպետական իրավական ակտի՝ «Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման մասին» հոչակագրի ոգուց ելնելով՝ 1920 թ. օգոստոսի 10-ին ՀՀ պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանը Անտանտի հաղթանակած տերությունների շարքում Առաջին աշխարհամարտում իրեն պարտված ճանաչած Օսմանյան կայսրության հետ ստորագրեց Սևրի հաշտության պայմանագիրը, որի 88-րդ հոդվածով Թուրքիան և փաստաթուղթը ստորագրող մյուս պետությունները Հայաստանը ճանաչում էին որպես ազատ ու անկախ պետություն<sup>13</sup>:

Պայմանագրի 89-րդ հոդվածի համաձայն՝ Թուրքիան և Հայաստանը, ինչպես և մյուս բարձր պայմանավորվող կողմերը համաձայնում են Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի իրավարարությանը հանձնել Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանը որոշելու հարցը և ընդունել նրա կայացրած որոշումը, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնք նա կարող է սահմանել ինչպես Հայաստանին դեպի ծով ելք ապահովելու, այնպես էլ հիշյալ սահմանին հարող թուրքական տարածքների ապահովման և անվտանգության վերաբերյալ<sup>14</sup>:

Սևրի պայմանագրի սույն հոդվածի ձևակերպումներից ելնելով՝ որոշ հետազոտողներ այն փորձում են դիտարկել որպես ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի հայ-թուրքական սահմանի սահմանագծման հարցով միջազգային իրավարարության համաձայնություն (compromi), այսինքն՝ վեճի կողմերի՝ Օսմանյան կայսրության և Հայաստանի Հանրապետության համաձայնություն, առանց որի իրավարարությունը չէր կարող սկսվել: Սրանից ելնելով՝ եզրակացվում է, որ քանի որ Սևրի պայմանագիրը չի վավերացվել, ուստի դրանից իբր թե բխող ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի Իրավարար վճիռը նույնպես իրավական ուժ ունենալ չի կարող:

11 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 190, թ. 7-8:

12 Տե՛ս նույն տեղում, ֆ. 430, ց. 1, գ. 56, թ. 14:

13 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1917), խմբագիր՝ **Զ. Վիրակոսյան**, Եր., 1972, էջ 676:

14 Տե՛ս Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920. <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf> (մուտք 20.10.2018)



մեջ չէին դրել այդ պայմանագիրը: Այս տրամաբանությամբ իրավարար վճիռն ընդհանրապես չափտի կայացվեր, քանզի Սևրի պայմանագիրն այդպես էլ չվավերացվեց և ուժի մեջ չմտավ: Սակայն ԱՄՆ-ի նախագահը, Սևրի պայմանագրով իրեն բացարձակապես կաշկանդված չզգալով, անմիջապես գործի անցավ և անգամ այն վավերացված չլինելու պայմաններում 1920 թ. նոյեմբերի 22-ին կայացրեց Իրավարար վճիռը: **Այս հանգամանքներն ակնհայտ կերպով վկայում են այն մասին, որ իրավարարության իրական կոմպրոմիս ոչ թե Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածն է, այլ Սան Ռեմոյի կոնֆերանսում հաղթանակած տերությունների Գերագույն խորհրդի որոշումը:**

Հատկանշական է, որ հենց Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածի համաձայն՝ անդամ պետություններն իրավարար վճռի ընդունումը չեն պայմանավորել որևէ հանգամանքով, այլ պարտավորվել են վճիռն ընդունել անմիջապես, իսկ վեճի կողմ հանդիսացող Թուրքիան 90-րդ հոդվածով լրացուցիչ կերպով վերահաստատել է այս դիրքորոշումը. «89-րդ հոդվածի համաձայն՝ սահմանը որոշելիս հիշյալ վիլայեթների ամբողջ տարածքը կամ դրա որևէ մասը Հայաստանին փոխանցելու դեպքում, Թուրքիան սույնով հայտարարում է, որ այդ որոշման ընդունման օրից հրաժարվում է փոխանցված տարածքի նկատմամբ բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից»<sup>16</sup>: Ավելին՝ Հայաստանի Հանրապետությանը էրզրումի, Վանի և Բիթլիսի նահանգների փոխանցումը արդեն իսկ վճռված հարց համարելով՝ պայմանագիրը ստորագրող պետությունները այդ փոխանցվելիք տարածքների մասով Օսմանյան կայսրության նախկին պարտքը մարելու թուրքական պետության պարտավորությունը նույն հոդվածի հաջորդ պարբերությամբ փաստորեն դնում էին Հայաստանի վրա. «Սույն պայմանագրի այն դրույթները, որոնք կիրառվելու են Թուրքիայից անջատվող տարածքների նկատմամբ, այսուհետ կգործադրվեն նշված տարածքների նկատմամբ: Փոխանցվող տարածքի հետ կապված Թուրքիայի ֆինանսական պարտավորությունների չափը և դրանց բնույթը, որը Հայաստանը պետք է ստանձնի, կամ նրան փոխանցվելիք իրավունքների հարցերը կկարգավորվեն սույն պայմանագրի VIII մասի (Ֆինանսական դրույթներ) 241-ից 244-րդ հոդվածների համաձայն\*»<sup>17</sup>:

Այսպիսով, Սևրի պայմանագրի անդամ պետություններն անվերապահորեն համերաշխվել են հաղթանակած տերությունների Գերագույն խորհրդի Սան Ռեմոյի կոնֆերանսին կայացրած իրավարարության որոշման հետ:

Հատկանշական է, որ նույնիսկ Սևրի պայմանագրի 91-րդ հոդվածով Վիլսոնի իրավարար վճիռը գործնականում կիրառելու որոշ մեխանիզմներ էին նախատեսվում. «89-րդ հոդվածում նշված տարածքի որևէ մասը Հայաստանին փոխանցելու դեպքում տվյալ հոդվածում նշված որոշման ընդունումից երեք ամսվա ընթացքում

16 Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920. <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf> (մուտք 20.10.2018).

\* Հիշյալ հոդվածները վերաբերում էին նախկին Օսմանյան կայսրության պարտքի մարման ժամանակացույցին և մեխանիզմներին:

17 Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920. <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf> (մուտք 20.10.2018).



կձևավորվի հիշյալ որոշմամբ սահմանված Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանագիծը տեղում անցկացնող Սահմանային հանձնաժողով, որի կազմը կորոշվի ապագայում»<sup>18</sup>: Սակայն Թուրքիայի ներքաղաքական զարգացումների և աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխության պատճառով Սևրի պայմանագիրը չվավերացվեց և չմտավ ուժի մեջ, ուստի Սահմանային հանձնաժողովի կողմից Վիլսոնի Իրավարար վճռով սահմանված հայ-թուրքական սահմանի սահմանագծման աշխատանքներ այդպես էլ չկատարվեցին:

Վիլսոնը Իրավարար վճիռը ստորագրեց Հայաստանի խորհրդայնացումից ընդամենը 10 օր առաջ՝ 1920 թ. նոյեմբերի 22-ին: Արդեն խորհրդայնացումից հետո՝ դեկտեմբերի 6-ին, ԱՄՆ-ի նախագահի կայացրած Իրավարար վճիռը Փարիզում պաշտոնապես փոխանցվեց դաշնակից ուժերի Գերագույն խորհրդին: Վճիռ պաշտոնական և ամբողջական անվանումն է. «ԱՄՆ նախագահի որոշումը Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի և հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ»: ԱՄՆ նախագահն՝ իբրև իրավարար, իր իրավասության շրջանակներում և ելնելով Դաշնակից ուժերի Գերագույն խորհրդի նախատեսած տարածքային սահմանափակումից, հայ-թուրքական սահմանագծումն իրականացնելիս նախկինում Օսմանյան կայսրության տարածք համարվող Վանի, Բիթլիսի, էրզրումի և Տրապիզոնի նահանգների վրա հաստատում էր հայ ժողովրդի տիտղոսն ու իրավունքները՝ ապահովելով նաև ելք դեպի Սև ծով: Իրավարար վճռով Հայաստանին փոխանցվելիք տարածքը կազմելու էր  $\approx 103.599$  քառ. կմ, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի շուրջ 40%-ը:

Ընեց Իրավարար վճռի վերնագրում «հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման» դրույթի ամրագրումը չափազանց կարևոր է: Այս ձևակերպումը կարելի է համարել վճռի կայացման պահին տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումների, մասնավորապես՝ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի, դրան հաջորդած Հայաստանի խորհրդայնացման, ինչպես նաև քեմալականների կողմից Իրավարար վճռով Հայաստանին փոխանցվելիք տարածքների կատարյալ վերահսկման փաստի ուղղակի արտացոլումը իրավարար վճռի մեջ: Այսպիսով, անգամ վճռի վերնագրի տրամաբանությունից բխում էր ոչ միայն քեմալականների ռազմական ուժերի դուրսբերումը Հայաստանին փոխանցվելիք չորս նահանգների տարածքներից, այլև անգամ դրանց հետքաշումը իրավարար վճռով նախատեսված հայ-թուրքական նոր սահմանից դեպի Թուրքիայի խորքերը:

Վիլսոնի Իրավարար վճիռը, որը կայացվեց այդ պահին գործող միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, քաղաքական պատասխանատվության յուրատեսակ դրսևորում էր Հայոց ցեղասպանությունն իրագործած Օսմանյան կայսրության նկատմամբ՝ թուրքական իշխանություններին զրկելով նշված տարածքների նկատմամբ գերիշխանության իրավունքից: Հայաստանի և Թուրքիայի սահմանի

<sup>18</sup> Նույն տեղում:

հստակեցման հարցով իրավարարության գործընթացը նախաձեռնվեց, և վճիռը կայացվեց այն տրամաբանությամբ, որ նշված տարածքների վրա թուրքերի իշխանության վերացումը և հայկական պետության կազմում դրանց ներառումը միայն կարող են բավարար երաշխիք համարվել, որ ցեղասպանության զոհ դարձած հայերը կարողանան վերադառնալ հայրենիք ու վերականգնել իրենց խախտված իրավունքները:

**Հայ-թուրքական սահմանի հստակեցման վերաբերյալ ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի Իրավարար վճռի չգործադրվելու օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներից անկախ՝ միջազգային իրավական այդ փաստաթուղթն անժամանցելի է և շարունակում է մնալ Միացյալ Հայաստանի գաղափարը կյանքի կոչելու պատմական, իրավական ու քաղաքական կարևորագույն կռվաններից մեկը:**

Հայաստանի սահմանների ու նրա ապագա ճակատագրի հարցերը քննարկման առարկա դարձան նաև Ազգերի լիգայում: 1920 թ. փետրվարի 21-ին Ա. Ահարոնյանը և Պ. Նուբարը մասնակցեցին Ազգերի լիգայի Հայաստանի սահմանների որոշման հանձնաժողովի նիստին, որտեղ արդեն առաջարկում էին Միացյալ Հայաստանի կազմում ընդգրկվելիք Վանի նահանգից առանձնացնել Հաքիարին, իսկ Բիթլիսից՝ Սղերդը, Կիլիկիան էլ՝ որպես հայկական ինքնավարություն, նախատեսվում էր փոխանցել Ֆրանսիայի մանդատի ներքո, պայմանով, որ Հայաստանը Կիլիկիայով երկաթուղային ելք ստանար դեպի Միջերկրական ծով<sup>19</sup>: Դժվար չէ նկատել, որ 1919 թ. փետրվարի 26-ին Փարիզի վեհաժողովի Տասի խորհրդին համատեղ հուշագրի ներկայացումից մեկ տարի անց Ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուբարն արդեն նահանջել էր Կիլիկիան Միացյալ Հայաստանի կազմում ընդգրկելու առավելապաշտ մոտեցումներից և համակերպվել էր այն Ֆրանսիայի մանդատի տակ փոխանցելու մտքի հետ՝ դեպի Միջերկրական ծով Կիլիկիայով երկաթուղային ելք ունենալու պայմանով: Կարծում ենք, որ այս մոտեցումն ավելի վաղ որդեգրելու դեպքում, թերևս, հնարավոր կլիներ խուսափել հայկական պատվիրակությունների առաջարկների նկատմամբ ֆրանսիական կողմի կոշտ հակազդեցությունից:

Չսպասելով Հայաստանի մանդատի վերաբերյալ ԱՄՆ-ի Սենատի և հայ-թուրքական սահմանի հստակեցման հարցով ԱՄՆ-ի նախագահի որոշմանը՝ մայիսի 13-ին Ա. Ահարոնյանն Ազգերի լիգայի խորհրդի նախագահին էր փոխանցել կազմակերպությանն անդամակցելու՝ Հայաստանի կառավարության խնդրանքը: Հայաստանը ցանկանում էր որքան հնարավոր է շուտ անդամակցել Ազգերի լիգային՝ ձգտելով հարևան պետությունների հնարավոր հարձակումների դեպքում ստանալ այդ կառույցի օժանդակությունն ու պաշտպանությունը, ինչն ամրագրված էր կազմակերպության կանոնադրության 16-րդ հոդվածով<sup>20</sup>: Նույն շարժառիթներից ելնելով՝ Լիգան խուսափում էր Հայաստանի անդամակցության հարցի քննարկումից այն հիմնավորմամբ, թե Հայաստանի սահմանները վերջնականապես հստակեցված չեն՝ ակնարկելով Վիլսոնի Իրավարար վճռի դեռևս կայացած չլինելու հանգա-

19 Տե՛ս Ահարոնյան Ա. Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, էջ 59-63:

20 Տե՛ս Версальский мирный договор. Полный перевод с французского под редакцией Ю. В. Ключникова и А. Сабанина.

М., 1925, էջ 7–15:



Այդուհանդերձ, խորհրդային կարգերի հաստատման հանգամանքը Ազգերի լի-գայում եղանակ ստեղծող տերություններն իրենց համար բավարար հիմք համարե-ցին, որ Հայաստանի սահմանների ու նրա անդամակցության հարցերը հանվեն կազմակերպության օրակարգից:

**Ամփոփելով** նշենք, որ միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող ներ-կայիս Հայաստանի Հանրապետությունը՝ որպես Հայաստանի առաջին Հանրա-պետության իրավահաջորդ, ոչ միայն իր, այլև արևմտահայերի լեզիտիմ մարմնի՝ Երկրորդ համագումարի որոշմամբ տրված լիազորությամբ, օժտված է նաև արևմտահայության անունից Միացյալ Հայաստանի կերտման ուղղությամբ քայ-լեր ձեռնարկելու իրավասությամբ: Չպետք է մոռանալ նաև, որ Արևմտահայերի երկրորդ համագումարը, Հայաստանի Հանրապետությանը նման լիազորություն տալով հանդերձ, ընդգծել էր միասին ու համատեղ գործելու հանգամանքը, ինչը խիստ արդիական է նաև մեր օրերում: Միացյալ Հայաստանի կերտման ուղղու-թյամբ տարվելիք համատեղ աշխատանքներում Հայաստանի և Սփյուռքի միջև հարկավոր է ճիշտ դերաբաշխում կատարել՝ ելնելով նրանցից յուրաքանչյուրի ի-րավասություններից, փորձից ու կարողություններից, ինչը թույլ կտա սահմանա-փակ ռեսուրսներն օգտագործել ավելի արդյունավետ ու նպատակային: Ասվածի հիմքերն արդեն դրվել են Արցախյան ազատամարտով ու Արցախի Հանրապե-տության փաստացի գոյությամբ, ինչպես նաև 2015 թ. հունվարի 29-ին ընդուն-ված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հոշակագրի ընդունումով, որով ենթադրվում է մշակել **իրավական պահանջների թղթածրար**՝ դիտելով այն որպես անհատական, համայնքային և համազգային իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ: Մնում է հուսալ, որ այդ փաստաթղթի ընդունմանը կհետևեն Միացյալ Հայաստան կերտելու ուղղու-թյամբ Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի հաջորդ փոխհամաձայնեցված քայլերը:

**Արմեն Ց. Մարության** – 50-ից ավելի գիտական հոդվածների, հայերեն, ռուսերեն և անգլերեն 10 գրքերի հեղինակ և փաստաթղթերի չորս ժողովա-ծուների կազմող է: Գիտական հետաքրքրություններն են հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանի պատմության, մասնավորապես՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության հարցերը, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները:

**THE TREATY OF SÈVRES AND THE ARBITRAL AWARD OF W. WILSON AS THE BEGINNING OF IMPLEMENTATION OF THE ACT OF UNITED AND INDEPENDENT ARMENIA**

Armen Ts. Marukyan

**Key words** – Republic of Armenia, Western Armenia, Cilicia, Paris Conference, Second Congress of the Western Armenians, Paris National Congress, “Act of independence of Uniform Armenia”, Treaty of Sèvres, Arbitral Award of the US President Woodrow Wilson, League of Nations, “Pan-Armenian Declaration on the 100th Anniversary of the Armenian Genocide”.

Being guided by provisions of “The Act of Independence of United Armenia” the head of the delegation of the First Republic of Armenia A. Aharonyan together with other winning powers on August 10, 1920 signed the Treaty of Sèvres with the Ottoman Empire that was beaten in World War I. According to the 88th article Turkey alongside with other states that had signed this treaty recognized Armenia as an independent state. By the 89th article of the Treaty, Turkey, Armenia and also other countries that had signed this Treaty agreed to leave the demarcation of the Armenian-Turkish border in the provinces of Erzurum, Trabzon, Van and Bitlis and also the solution of a question of an exit of Armenia to the Black Sea on the decision of the USA. Because of the change of the geopolitical situation and internal political processes in Turkey the Treaty of Sèvres was not ratified and did not come into force.

However, several months before signing the Treaty of Sèvres four conferences in San Remo devoted to the process of specification of border between Armenia and Turkey that ended on November 22, 1920 with adoption of Arbitral Award of the U.S. President Woodrow Wilson on the Armenian-Turkish border began. According to Arbitral Award, the most part of provinces of Western Armenia namely of Van, Bitlis and Erzurum and also one third of the Trabzon province were transferred to Armenia, providing it an exit to the Black Sea. The territory transferred to Armenia composed of 103.599 km<sup>2</sup>, i.e. about 40% of the territory of Western Armenia. Arbitral Award of Wilson was made according to the norms of the international law operating then and was the manifestation of political responsibility concerning the Ottoman Empire that committed genocide of the Armenian population. Deprivation of the Turkish authorities of dominance over the listed former territories of the Ottoman Empire this international legal act registered the fact that only the inclusion of these territories in the structure of the Armenian state can be a sufficient guarantee that the indigenous Armenian people who fell a victim of genocide can return homeland and restore the violated rights.

## СЕВРСКИЙ ДОГОВОР И АРБИТРАЖНОЕ РЕШЕНИЕ В. ВИЛЬСОНА КАК НАЧАЛО РЕАЛИЗАЦИИ АКТА О НЕЗАВИСИМОСТИ ЕДИНОЙ АРМЕНИИ

Армен Ц. Марукян

**Ключевые слова** – Республика Армения, Западная Армения, Киликия, Парижская конференция, Второй съезд западных армян, Парижский Национальный съезд, Акт «О провозглашении независимости Единой Армении», Севрский договор, Арбитражное решение президента США Вудро Вильсона, Лига наций, Всearмянская декларация к 100-летней годовщине Геноцида армян.

Руководствуясь положениями акта «О провозглашении независимости Единой Армении» от 28-го мая 1919 г., глава делегации Республики Армения А. Агаронян 10 августа 1920 года вместе с державами-победительницами подписал Севрский договор с Османской империей, потерпевшей поражение в Первой мировой войне. Согласно 88-й статье, Турция в числе других подписавших данный договор государств признала Армению независимым государством. По 89-й статье договора Турция, Армения, а также другие подписавшие данный договор страны соглашались с тем, что демаркация армяно-турецкой границы в губерниях Эрзерума, Трапезунда, Вана и Битлиса, а также решение вопроса о выходе Армении к Черному морю оставляются на Арбитражное решение президента США. По причине изменения геополитической обстановки и протекающих в Турции внутривластных процессов Севрский договор не был ратифицирован и не вступил в силу.

Однако, за несколько месяцев до подписания Севрского договора, еще на конференции в Сан-Ремо, начался процесс уточнения границы между Арменией и Турцией, который 22 ноября 1920 года завершился принятием Арбитражного решения президента США Вудро Вильсона по армяно-турецкой границе. Согласно данному решению, бо льшая часть вилайетов Западной Армении - Вана, Битлиса и Эрзерума, а также треть Трапезундской губернии передавались Армении, обеспечивая ей выход к Черному морю. Передаваемая Армении территория составляла 103,599 км<sup>2</sup>, т. е. около 40 % территории Западной Армении. Арбитражное решение Вильсона было принято в соответствии с нормами действующего тогда международного права и являлось признанием политической ответственности Османской империи, совершившей геноцид армянского населения. Лишение турецких властей владычества над перечисленными бывшими территориями Османской империи данным международно-правовым актом оправдывалось тем, что только включение этих территорий в состав армянского государства может быть достаточной гарантией того, что коренное армянское

население, ставшее жертвой геноцида, может вернуться на свою родину и восстановить свои нарушенные права.

## REFERENCES

1. **Aharonyan A.**, Sardarapatitc minch'ev' Sev'r yev' Lozan, Ye'r, 2001 (**in Armenian**).
2. **Barsegov Y. G.** Armjanskij vopros v Lige nacij, "Vestnik Armjanskogo instituta mezhdunarodnogo prava i politologii v Moskve", N 2, M., 2004 (**in Russian**).
3. Cegh'aspanut'yan heteva'nqov hay zh'ogh'ovrdi krac' korustnerə (kazmogh **L. Barseghyan**), Ye'r, 1999 (**in Armenian**).
4. Genocid armjan: otvetstvennost' Turcii i objazatel'stva mirovogo soobshestva. Dokumenti I kommentarii. Sostavitel', otv. redactor, avtor predislovija i kommentarija **Y. G. Barsegov**, t. 2, ch. 2, M., 2005 (**in Russian**).
5. HAA, f. 57, ts. 5, g. 190, f. 114, ts. 2, g. 63, f. 200, ts. 1, g. 35, g. 193, f. 430, ts. 1, g. 28, g. 56. (**in Armenian**).
6. **Hakobyan A.**, Miacyal Hayastani ankaxut'yan aktə. Əndunman 90-amyaki arit'ov, "Vem" hamahaykakan handes, Ye'r., 2009, N 1 (29) (**in Armenian**).
7. Hayastanə mijazgayin divanagitut'yan yev' sovetakan artaqin qagh'aqakanut'yan pastat'gh't'erum (1828–1917), (xmbagir' **J. Kirakosyan**), Ye'r, 1972 (**in Armenian**).
8. Haykakan harcə hash'tut'yan konferansic ar'ach', Tiflis, 1919 (**in Armenian**).
9. **Meliqyan V.**, Arev'mtahayeri hamagumarnerə yev' Haykakan harci p'ulerə 1917–1923 t't', Ye'r, 2007 (**in Armenian**).
10. **Pogh'osyan S.**, Pogh'os Nubar p'ash'a. Azgayin gorc'ich'ə, Ye'r, 2004 (**in Armenian**).
11. **T'orikean Sh'.**, Haykakan harcə yev' mijazgayin orenqə, Peyrut', 1976 (**in Armenian**).
12. Versalskij mirnyj dogovor. Polnyj perevod s francuzskogo pod redakciej **Y. V. Klyuchnikova A. Sabanina**, M., 1925 (**in Russian**).